600.0362.27.07.11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

27 հուլիսի 2011 թվականի №362Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 7-Ի №240Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2008 թվականի մայիսի 7-ի «Տրանսգազ» սահմանափակ պատասխա-նատվությամբ ընկերության գնումների իրականացման սկզբունքները հաստատելու մասին» №240Ա որոշման՝
   1) վերնագրում «ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ» բառերը փոխարինել «ԿԱՐԳԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ» բառերով,
   2) 1-ին կետում «Հաստատել» բառը փոխարինել «Սահմանել» բառով, իսկ «իրականացման սկզբունքները» բառերը՝ «կարգի նկատմամբ լրացուցիչ պահանջները» բառերով,
   3) 1-ին կետով հաստատված հավելվածի վերնագրում «ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ» բառերը փոխարինել «ԿԱՐԳԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՀԱՆՋՆԵՐ» բառերով,
   4) 1-ին կետով հաստատված հավելվածի 1-ին կետում «պարտավոր է» բառից հետո լրացնել «կազմակերպել և» բառերը,

5) 1-ին կետով հաստատված հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 10-րդ կետով.

«10. Լիցենզավորված անձն իր կողմից հաստատված գնումների կարգը, գնման գործընթացների կազմակերպման մասին հայտարարությունները, հրավերները, գնումների բազային միավորը (1 մլն դրամ) գերազանցող՝ կնքված պայմանագրերի մասին հայ-տարարությունները պարտավոր է տեղադրել իր պաշտոնական կայքում և հրապարակել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված լիազորված մարմնի կողմից հրապարակվող տեղեկագրում (Գնումների էլեկտրոնային տեղեկատու)։»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հոկտեմբերի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ**

ք.Երևան
հուլիսի 2011թ.